1.<<ԴԻՋԻԳԵՅՄ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ ժամը 24 00-ից հետո աշխատելու թույլտվություն 2020 թվականի հունվարի 08-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը /գրանցման հասցե՝ քաղաք Երևան, Ամիրյան 26, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Բաղրամյան թաղամաս, Անդրանիկի 96, վիճակախաղերի կազմակերպում/:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 հունվարի 2020թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2020թվականի N 88

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անհատ ձեռնարկատեր Արևշատ Հովհաննիսյանին տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն 2020 թվականի հունվարի 08-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, շենք 300, բնակարան 06, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց 16, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 հունվարի 2020թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2020թվականի N 89

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անհատ ձեռնարկատեր Ռոբերտ Սայադյանին տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն 2020 թվականի հունվարի 08-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, հ/մ մասնաշենք 7, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի 18, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 հունվարի 2020թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2020 թվականի N 90

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անհատ ձեռնարկատեր Արծրուն Գևորգյանին տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն 2020 թվականի հունվարի 08-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը /գրանցման հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Մեղրաձոր, 2-րդ փողոց, տուն 5, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Ջրատառ թաղամաս, Գործարանային փողոց 42, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 հունվարի 2020 թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2020 թվականի N 91

ՈԳԵԼԻՅ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 167-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անհատ ձեռնարկատեր Վեներա Մկրտչյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի հունվարի 08-ից մինչև 2020 թվականի մարտի 31-ը, առաջին եռամսյակի համար /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղամաս թիվ 33, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղամաս թիվ 33, առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 հունվարի 2020թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱԴԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2020թվականի N 92

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հարավային թաղամասում գտնվող 1866.3 քմ մակերեսով 0613-0002 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Մպանդարյան փողոց 72/2:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 հունվարի 2020թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2020թվականի N 93

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հարավային թաղամասում գտնվող 2131.2 քմ մակերեսով 0613-0002 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 72/3:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 հունվարի 2020թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020թվականի N 94

**ԱՎԻՍ ԷԴԻԿԻ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 197 որոշման 1-ին կետի 19-րդ ենթակետը և 2020 թվականի հունվարի 24-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 5 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 3/3 հասցեում գտնվող 07-001-0109-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 904.3 քմ մակերեսով հողամասն աճուրդային կարգով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 122 շենքի թիվ 20 բնակարանի բնակիչ Ավիս Էդիկի Սարգսյանին առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռքբերված 904.3 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Պարտավորեցնել Ավիս Էդիկի Սարգսյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱԴԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020թվականի N 95

**ՆԱԶԵՆԻ ՆՎԵՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 197 որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետը և 2020 թվականի հունվարի 24-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 1 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց 12 հասցեում գտնվող 07-001-0439-0084 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 39.2 քմ մակերեսով հողամասն աճուրդային կարգով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Պուրակային փողոցի 6-րդ նրբանցքի թիվ 12 տան բնակչուհի Նազենի Նվերի Բեգլարյանին տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռքբերված 39.2 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Պարտավորեցնել Նազենի Նվերի Բեգլարյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության ատկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020թվականի N 96

**ԼԵՌՆԻԿ ԱՇՈՏԻ ՍԵՓՈՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 197 որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետը և 2020 թվականի հունվարի 24-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 3 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 13/15 հասցեում գտնվող 07-001-0513-0106 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 60.0 քմ մակերեսով հողամասն աճուրդային կարգով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 234 շենքի թիվ 25 բնակարանի բնակիչ Լեոնիկ Աշոտի Սեփոյանին տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռքբերված 60.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Պարտավորեցնել Լեոնիկ Աշոտի Սեփոյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԳԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020 թվականի N 97

**ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆԻ ԿՈՒՐԱԼՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, Հոդային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 197 որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետը և 2020 թվականի հունվարի 24-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 4 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 13/16 հասցեում գտնվող 07-001-0513-0107 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 60.0 քմ մակերեսով հողամասն աճուրդային կարգով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 234 շենքի թիվ 30 բնակարանի բնակիչ Վահագն Վարդանի Կոբայանին տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռքբերված 60.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Պարտավորեցնել Վահագն Վարդանի Կոբայանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության ատկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԳԱԿԱՐ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020 թվականի N 98

**ԱՌԱՔԵԼ ՀԱՅԿԱՐԱՄԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 197 որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետը և 2020 թվականի հունվարի 24-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 7 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի Հայ Ֆիդայիների փողոց 2/2 հասցեում գտնվող 07-001-0529-0029 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 288.0 քմ մակերեսով հողամասն աճուրդային կարգով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 476 տան բնակիչ Առաքել Հայկարամի Առաքելյանին տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռքբերված 288.0 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Պարտավորեցնել Առաքել Հայկարամի Առաքելյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության ատկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020 թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020 թվականի N 99

**ԱՐԱՄ ՌԱՖԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 197 որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետը և 2020 թվականի հունվարի 24-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N 2 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 73/9 հասցեում գտնվող 07-001-0457-0082 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 78.1 քմ մակերեսով հողամասն աճուրդային կարգով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոցի 16-րդ շենքի թիվ 27 բնակարանի բնակիչ Արամ Ռաֆիկի Վիրաբյանին բնակելի տուն և տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռքբերված 78.1 քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:
3. Պարտավորեցնել Արամ Վիրաբյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020 թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020 թվականի N 100

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱԴՆՈՒՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 24-ի N39-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Հրազդան համայնքի ղեկավարի խորհրդական Անահիտ Մնացականյանին:
4. Հանձնարարել համայնքի ղեկավարի խորհրդական Անահիտ Մնացականյանին՝ ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերի տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:
5. Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի խորհրդական Անահիտ Մնացականյանի վրա:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուշար Ռոբերտ Դանիելյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020թ.
ք. Հրազդան



Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի
2020 թվականի հունվարի 31-ի

N 100 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2020 թվականի հունվարի 31-ից մինչև փետրվարի 14-ը ներառյալ կազմակերպվող Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Հրազդան համայնքի 2019 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2020 թվականի փետրվարի 14-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում՝ 2020 թվականի փետրվարի 17-ին ժամը 15:00-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060-460-148 հեռախոսահամարով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020թվականի N 101

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱԴԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 24-ի N39-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի զարգացման ծրագրի 2019 թվականի կատարողական հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Հրազդան համայնքի զարգացման ծրագրի 2019 թվականի կատարողական հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող քննարկումների հրավերը համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Հրազդան համայնքի ղեկավարի խորհրդական Անահիտ Մնացականյանին:
4. Հանձնարարել համայնքի ղեկավարի խորհրդական Անահիտ Մնացականյանին՝ ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հրազդան համայնքի զարգացման ծրագրի 2019 թվականի կատարողական հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերի տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:
5. Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի խորհրդական Անահիտ Մնացականյանի վրա:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանը:
7. Սույն որոշումն ուժի մտնում է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020թ.
ք. Հրազդան



Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի

2020 թվականի հունվարի 31-ի

N 101 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2020 թվականի հունվարի 31-ից մինչև փետրվարի 14-ը ներառյալ կազմակերպվող Հրազդան համայնքի զարգացման ծրագրի 2019 թվականի կատարողական հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Հրազդան համայնքի զարգացման ծրագրի 2019 թվականի կատարողական հաշվետվության նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2020 թվականի փետրվարի 14-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում՝ 2020 թվականի փետրվարի 17-ին ժամը 12:00-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060-460-148 հեռախոսահամարով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Մահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020թվականի N 102

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի
N 977 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի .

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ '

1. Հրազդան համայնքի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 10-ի «Բնակելի տան ինքնակամ կառուցած առաջին հարկի, ինքնակամ կառուցած աստիճանավանդակի, ինքնակամ կառուցած օժանդակ շինության, ինքնակամ կառուցած ծածկարանի օրինականացման մասին» N 977 որոշման 1-ին կետում «1068.94» թիվը փոխարինել «540.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հունվարի 2020թվականի N 103

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Կառավարության 2011թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 53-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի բնակչության տարահանման պլանը՝ համաձայն սույն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Հրազդանի քաղաքապետի 2015 թվականի մարտի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի բնակչության տարահանման պլանը հաստատելու մասին>> N 193 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

31 հունվարի 2020թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

Պ Լ Ա Ն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ՊԼԱՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ
2. ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՑՈՒՑԱԿ
3. ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՄԽԵՄԱ
4. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
5. ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
6. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
7. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԿԵՏԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
8. ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՏԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ 10 ԿՄ ԳՈՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ
11. ԱՂԲՅՈՒՐԱԿԻ ԶՐԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՐԻԿԻ ՀՈՒՆԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ
12. ՈՒՆԹՆ - ԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԱՐԿ
13. ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ(SՀԿ), ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԿԵՏԵՐԻ(ԺՏԿ) ԵՎ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՏԵՐԻ(ԵԲԿ) ՊԵՏԵՐԻ ԑՈՒՑԱԿ



Հավելված 1

Հրազդան համայնքի ղեկավարի
2020թ. հունվարի 31-ի N 103 որոշման

1. ՊԼԱՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ

ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Բնակչության տարահանում՝ արտակարգ իրավիճակներում կամ ռազմական դրության ժամանակ վտանգավոր տարածքներից բնակչության կազմակերպված դուրս բերում և ժամանակավոր տեղաբաշխում կենսաապահովման համար նախապես պատրաստված անվտանգ տարածքներում.
2. Տարահանման հանձնաժողով՝ նշանակված կազմ, որը կազմակերպում ու ղեկավարում է տվյալ տարածքի բնակչության ու կազմակերպությունների տարահանման միջոցառումները.
3. Տարահանման հավաքակայան՝ տարահանվող բնակչության ընդունման և հաշվառման հավաքատեղ.
4. Ընդունման հավաքակայան՝ հավաքատեղի, որտեղ կատարվում են տարահանված բնակչության ընդունում, հաշվառումը և բաշխումը՝ ըստ ժամանակավոր կացարանների.
5. Ընդհանուր տարահանում՝ տվյալ տարածքի (բնակավայրի) ամբողջ բնակչության տարահանում.
6. Մասնակի տարահանում՝ մինչև 16 տարեկան երեխաների, հղի և մինչև 8 տարեկան երեխա ունեցող կանանց, 8-16 տարեկան երեխա ունեցող այն կանանց, որոնց ընտանիքների կազմում չկան տարահանման ենթակա՝ անաշխատունակ անդամներ, հաշմանդամների և կենսաթոշակառուների տարահանում, կամ տվյալ տարածքի բնակչության մի մասի տարահանում.
7. Տարահանման երթուղի՝ տարահանվող բնակչության բնակավայրը տեղաբաշխման բնակավայրին միացնող ճանապարհ (ճանապարհահատված).
8. Տարահանման ավտոշարասյուն՝ տարահանման հավաքակայանից (բնակավայրից) ընդունման հավաքակայան (բնակավայր) մեկնող երկու կամ ավելի ավտոմեքենայից բաղկացած շարասյուն.
9. Տարահանման հետիոտն շարասյուն՝ տարահանման հավաքակայանից (բնակավայրից) ընդունման հավաքակայան (բնակավայր) հետիոտն կազմակերպված խումբ.
10. Տարահանման պլան՝ նախապես մշակված փաստաթուղթ, որով կանոնակարգվում են մեկ տարածքից (բնակավայրից, օբյեկտից) մեկ այլ տարածք բնակչության տարահանման, տեղաբաշխման և բազմակողմանի կենսաապահովման միջոցառումները.

11. Վտանգավոր տարածք՝ տեղանք կամ առանձին բնակավայր, օբյեկտ, որտեղ արտակարգ իրավիճակի կամ ռազմական դրության հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ:

12. Անվտանգ տարածք՝ վտանգավոր տարածքից դուրս գտնվող տարահանվող բնակչության կենսաապահովման, ինչպես նաև կենդանիների և նյութական արժեքների տեղաբաշխման համար նախապատրաստված տարածք:

13. Ժամանակավոր տեղակայման կետ՝ տարահանված բնակչության կարճաժամկետ տեղակայման համար նախատեսված օբյեկտ (տարածք):

14. Երկարատև բնակչության կետ՝ տարահանված բնակչության կենսաապահովման, երկարատև տեղակայման համար նախատեսված օբյեկտ:

15. Տարահանման միջանկյալ կետ՝ (կարճաժամկետ տեղակայման կետ) ստեղծվում է վտանգավոր գոտու սահմաններից դուրս՝ մոտակա բնակավայրերին և հաղորդակցման ուղիներին մոտ:

16. Նստեցման կետ՝ ստեղծվում են, որպես կանոն, տարահանման հավաքակայանների անմիջական հարևանությամբ, ինչպես նաև երկաթգծի կայարաններում, կառամատույցներում և կազմակերպությունների մուտքերի մոտ:

17. Իջեցման կետ՝ տեղակայվում են տարահանված բնակչության ընդունման հավաքակայանների տեղակայման մոտակայքում:

18. Տարահանման համակցված եղանակ՝ բնակչության տարահանման միաժամանակյա իրականացումը հետիոտն և տրանսպորտային միջոցով:

2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՄԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.1. Տարերային, տեխնածին կամ էկոլոգիական աղետների ինչպես նաև ուժեղ ներգործող թունավոր նյութերի վթարի (արտահոսքի) դեպքում բնակչության տարահանման մասին որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը:

2.2. Ռազմական դրության ժամանակ տարահանման մասին որոշումը ընդունում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

2.3. Համայնքային տարահանման հանձնաժողովների հետ կապը իրականացվում է ֆիքսված և բջջային հեռախոսակապի միջոցներով:

2.4. Բնակչությանն ազդարարելու և տեղեկատվությունները հաղորդելու նպատակով օգտագործվում է էլ. շփակները, ինչպես նաև համայնքային/մարզային/հեռուստաընկերությունները:

2.5. Տարահանման միջոցառումները կազմակերպում և ղեկավարում է համայնքի տարահանման հանձնաժողովը՝ համաձայն սույն պլանի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հիմնադրույթներով:

3. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ

3.1. Համայնքի տարածքում տարահանումը նախատեսվում է՝

- ջրամբարների պատվարի փլուզման, Հրազդան և Մարմարիկ գետերի հորդացման հետևանքով, ջրածածկման ենթարկված տարածքներից.
- ՈՒՆԹՆ-եր օգտագործող օբյեկտների վտանգավոր տարածքներից.

3.2. Աղբյուրակի ջրամբարի պատվարի փլուզման, ինչպես նաև Հրազդան գետի հունի բարձրացման դեպքում ջրածածկման գոտում կարող են հայտնվել Հրազդան համայնքի Վանատուր, Ջրառատ, Աղբյուրակ թաղամասերով անցնող Հրազդան գետի հունի ափամերձ բնակելի տները: Ջրածածկման գոտում հայտնված բնակիչները տարահանվում են նույն բնակավայրերի անվտանգ տարածքներ՝ հետիոտն /հավելված թիվ 11 /:

3.3. Հրազդան գետի Մարմարիկ վտակի հունի բարձրացման դեպքում ջրածածկման գոտում կարող են հայտնվել՝ Հրազդան համայնքի Վանատուր, Ջրառատ, Ներքին աղբյուրակ թաղամասերի որոշակի մասը: Ջրածածկման գոտում հայտնված բնակիչները տարահանվում են նույն բնակավայրերի անվտանգ տարածքներ՝ հետիոտն: /հավելված թիվ 11 /:

3.4. ՈՒՆԹՆ-եր օգտագործող օբյեկտների վթարի դեպքում վտանգավոր գոտում կարող է հայտնվել Հրազդան համայնքի Միկրոշրջան, Ջրառատ, Վանատուր թաղամասերը: Վտանգավոր գոտում հայտնված բնակիչները տարահանվում են նույն բնակավայրերի անվտանգ տարածքներ՝ հետիոտն՝ համաձայն ՈՒՆԹՆ-եր օգտագործող օբյեկտի պլանի /հավելված N 12 /:

3.5. Հայկական Ատոմային էլեկտրակայանի միջուկային և կամ ճառագայթային վթարի դեպքում ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 22-ի N 2328 որոշմամբ նախատեսված է, որ Կոտայքի մարզի Հրազդան համայնքը Արմավիրի մարզից Մեծամոր համայնքից ընդունում են 10200 մարդ, որոնց ընդունումը և տեղաբաշխումը իրականացվում է համաձայն Հրազդան համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1292 որոշումով հաստատված <<Հայկական Ատոմային էլեկտրակայանի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարի դեպքում վթարային հակազդման և վտանգավոր գոտուց տարահանված բնակչության տեղաբաշխման>> պլանի:

4. ՏԱՐԱՀԱՆՎՈՂՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ

4.1. Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման և տեղաբաշխման միջոցառումները իրականացնելու նպատակով համայնքի ղեկավարի 2019թ. մայիսի 23-ի N 567 որոշմամբ ստեղծվել է <<Հրազդան համայնքի . բնակչության տարահանման հանձնաժողով>> և հանձնաժողովին կից աշխատանքային խմբեր, որի նախագահը ի պաշտոնե համարվում է համայնքի ղեկավարի տեղակալը:

4.2. Համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ համայնքում ստեղծվել է տարահանման հանձնաժողով, տարահանման հավաքակայաններ, ժամանակավոր կամ երկարատև բնակության կետեր /հավելված թիվ 13 /:

4.3. Տարահանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:

4.4. Տարահանումը իրականացվում է այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում, բնակավայրերում, օբյեկտներում կարող են առաջանալ կյանքի և կենսագերծունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ: Նման դեպքերում իրականացվում է լրիվ կամ մասնակի տարահանում:

4.5. Անվտանգ տարածքում տարահանված բնակչության համար որպես ժամանակավոր կացարաններ կարող են օգտագործվել դպրոցները, ակումբները, հյուրանոցները, բնակելի տները անկախ սեփականության ձևից: Ժամանակավոր կացարանները տրամադրվում է հետագա համարժեք փոխհատուցմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ՏԱՐԱՀԱՆՎՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ (ԴՈՒՐՍ ԲԵՐՈՒՄԸ) ԱՒ ԳՈՏՈՒՑ

5.1. Բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն շարասյուններով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարասյունով:

5.2. Տարահանման տրամադրվող տրանսպորտային միջոցների օգտագործումը ու վառելիքա-քառկային նյութերով ապահովումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

6. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հասարակական կարգի պահպանության ՔՊ համայնքային ծառայությունը, ինչպես նաև համայնքում ստեղծված հասարակական կարգի պահպանման աջակցող խմբերը պատասխանատվություն են կրում տարահանման /ընդունման/ հավաքակայանների, ավտոշարասյունների և երթուղիների հասարակական կարգի կազմակերպման և իրականացման համար:

7. ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Տարահանման մրջոցառումների իրականացման ժամանակ բժշկական ապահովվածությունը կազմակերպվում և իրականացվում է համայնքի բժշկական ծառայության ուժերով, իսկ անհրաժեշտության դեպքում տուժածների բժշկական ապահովման համար կներգրավվեն հանրապետության և արտասահմանյան երկրներից՝ որպես հումանիտար օգնություն ստացված բժշկական միջոցները: Արտակարգ իրավիճակներից տուժածների հիմնական զանգվածը բժշկական օգնություն ստանալուց հետո կտարահանվի անվտանգ տարածքներ:

8. ՏԱՐԱՀԱՆՎՈՂՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Տարահանվող /ընդունվող/ բնակչության նյութատեխնիկական ապահովվածությունը իրականացվում է համայնքային առևտրի, սննդի և նյութատեխնիկական ծառայության կողմից:

8.2. Համայնքի տարածքում տարերային ու տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների, ինչպես նաև ռազմական գործողությունների հետևանքով տարահանված և տեղաբաշխված բնակչության կենսաապահովման առաջնահերթ կարիքները, առաջին հերթին, բավարարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության, համայնքի, ինչպես նաև մարդասիրական օգնության ձևով այլ պետությունների կառավարությունների, միջազգային մարդասիրական կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցների հաշվին:

8.3. Բնակչության կենսաապահովումը, դա բնակչության կենսագործունեության համար նրա ֆիզիոլոգիական, նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով անհրաժեշտ նվազագույն պայմանների ստեղծումը և պահպանումն է:

9. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

9.1. Արտակարգ իրավիճակի առաջացման մասին առաջին հաղորդագրությունը զանգվածային լրատվամիջոցներին (այսուհետ՝ ՁԼՄ) տրամադրում է Կոտայքի մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետի պետը:

9.2. Արտակարգ իրավիճակի վերաբերյալ որևէ հրատապ հաղորդագրության դեպքում կազմվում է բնակչության վարքականոնների մասին հաղորդագրություն, որը փոխանցվում է «Բի-լայն», «ՎիվաՍել-ՄՏՍ» և «Յուբոմ» բջջային կապի օպերատորներին՝ բաժանորդներին SMS հաղորդագրություններ ուղարկելու համար: Այս հաղորդագրությունները տրվում են նաև տեղական հեռարձակման հանգույցներով: Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրային հեռուստատեսությամբ և Հայաստանի հանրային ռադիոյով «Հատուկ թողարկում» խորագրի ներքո պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն բնակչության վարքականոնների, իրավիճակի, հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին:



ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ

1. Սաֆարյան Վարուժ հանձնաժողովի նախագահ,
համայնքի ղեկավարի տեղակալ
2. Դանիելյան Ռոբերտ հանձնաժողովի նախագահի
տեղակալ,
աշխատակազմի
քարտուղար
3. Նավասարդյան Տիգրան հանձնաժողովի քարտուղար,
ՏԱՄԿ բաժնի պետ
4. Հանձնաժողովի անդամներ՝
 1. Մնացականյան Անահիտ Համայնքի ղեկավարի օգնական
 2. Հայրապետյան Արմեն Ոստիկանության Հրազդանի
բաժնի պետի ծառայության գծով
տեղակալ
 3. Եփրեմյան Արևիկ Հրազդանի համայնքապետարանի
ֆինանսական բաժնի պետ
 4. Բաբայան Արամ Համայնքապետարանի
բնակֆոնդի շահագործման և կոմունալ
տնտեսության բաժնի պետ
5. Մարգարյան Պետիկ համայնքապետարանի աշխատակազմի
Տարածքային զարգացման, հողային կադաստրի և
գյուղատնտեսության բաժնի պետի տեղակալ
6. Մարգարյան Վահագ Հրազդանի
համայնքապետարանի «Մշակույթի
Կենտրոն» -ի տնօրեն
17. Գևորգյան Գրիգոր «Վեոլիա-Ջուր» ՓԲԸ Հրազդան տեղամասի շահագ. պետ

8. Ներսիսյան Հրաչ

ՀԷՅ ՓԲԸ «Գեղամա» մասնաձյուղի Հրազդան ցանցի
ճարտարագետ

9. Սերգեյ Սարկիսով

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ ճարտարագետ

1. Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

1) Հակոբյան Գուրգեն

խմբի ղեկավար, Հրազդանի համայնքապետարանի
աշխատակազմի Տարածքային զարգացման, հողային
կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետ

2) Գալստյան Արթուր

անդամ, Հրազդանի համայնքապետարանի «Մաքուր
Հրազդան» ՀՈԱԿ-ի տնօրեն

3) Ասատրյան Նվեր

անդամ, լիազոր ներկայացուցիչ
Միկրոշրջան թաղամասում

4) Հարությունյան Վիգեն

անդամ, լիազոր ներկայացուցիչ
Կենտրոն թաղամասում

5) Այվազյան Արմեն

համայնքապետարանի
աշխատակազմի կրթության,
մշակույթի և սպորտի բաժնի ղլխավոր
մասնագետ

6) Ներսիսյան Հայկարամ

Լիազոր ներկայացուցիչ Վանատուր թաղամասում

7) Կոտանյան Ստեփան

Լիազոր ներկայացուցիչ Ջրառատ թաղամասում

8) Կասպարյան Ղևոնդ

«Նարեկ» համատիրության նախագահ

2. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

1) Միքայելյան Միհրան

<<Մաքուր Հրազդան>> ՀՈԱԿ-ի առաջատար
մասնագետ

2) Ալեքսանյան Առնակ

անդամ,
<<Մաքուր Հրազդան>> ՀՈԱԿ-ի
մասնագետ

3) Լևոնյան Հասմիկ

անդամ, Հրազդանի
քաղաքապետարանի

աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա
միջավայրի պաշտպանության բաժնի
գլխավոր մասնագետ

4) Մուրադյան Նարեկ

անդամ, Հրազդանի քաղաքապետարանի
աշխատակազմի բնակ ֆոնդի շահագործման և
կոմունալ տնտեսության բաժնի 1-ին կարգի
մասնագետ

3. Տրանսպորտային ապահովման խումբ.

1) Զոհրաբյան Վարուժան

խմբի ղեկավար, տրանսպորտի, առևտրի
սպասարկումների կանոնակարգման բաժնի
գլխավոր մասնագետ

2) Խաչատրյան Գևորգ

անդամ, տրանսպորտի, առևտրի
սպասարկումների կանոնակարգման բաժնի
առաջատար մասնագետ

3) Մարգարյան Արայիկ

անդամ, աշխատակազմի երկրորդ
կարգի մասնագետ

4) Կարապետյան Լուսինե

անդամ, տրանսպորտի,
առևտրի
սպասարկումների կանոնակարգման
բաժնի
գլխավոր մասնագետ

4. Մենեջմենթի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.

1) Մաթևոսյան Գոռ

խմբի ղեկավար, աշխատակազմի հարկային բաժնի պետ

2) Ղարազյոզյան Հայկ

հարկային բաժնի գլխավոր մասնագետ

3) Մնացականյան Արման

անդամ, ՏԱՄԿ բաժնի առաջատար մասնագետ


4) Աթոյան Աշոտ

հարկային բաժնի առաջատար մասնագետ



Հրազդան համայնքի ղեկավարի
2020թ. հունվարի 31-ի N 103 որոշման

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ԱԶԴԱՐԱՐՄԱՆ





Հրազդան համայնքի ղեկավարի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈՔՐԱՏԻԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

[illegible]

[illegible]



Հավելված 5
Հրագրան համայնքի ղեկավարի
2020թ. հունվարի 31-ի N 103 որոշման

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԿԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ՏԱՐԱԿԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ ԿՄՓՎ) հետ համատեղ մշակում է բնակչության տարահանման պլանը:

2. Քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) ծառայությունների հետ համատեղ մշակում է տարահանվող բնակչության պաշտպանությանն ու համակողմանի ապահովմանն ուղղված միջոցառումները:

3. Կազմակերպում է տարահանման (ընդունման) հավաքակայանների վարչակազմի նախապատրաստումը:

4. Իրականացնում է հսկողություն համայնքում տարահանման հանձնաժողովների ստեղծման և նախապատրաստման նկատմամբ:

5. Իրականացնում է հսկողություն համայնքի տարահանման հանձնաժողովների պատրաստակաՆության բերման նկատմամբ:

6. Ճշտում է բնակչության տարահանման պլանը, համակողմանի ապահովման միջոցառումները:

7. Կազմակերպում է հետիոտն տարահանման երթուղիների նախապատրաստումը: Հսկում է տարահանված բնակչության ընդունման հավաքակայանների նախապատրաստումը ընդունելության համար:

8. Կապ է պահպանում բնակավայրերի, օբյեկտների հետ, որտեղից բնակչությունը նախատեսվում է տեղաբաշխել համայնքի տարածքում և նրանց ծանոթացնում է տարահանման տեղանքի հետ:

9. Բնակչության տարահանման իրականացման վերաբերյալ կարգադրություն ստանալուց հետո՝

- 1) Կազմակերպում է տարահանման հավաքակայանների ծավալումը:
- 2) Վերահսկում և կոորդինացնում է համայնքի տարահանման հանձնաժողովի աշխատանքը:
- 3) Հավաքում և ամփոփում է տվյալներ մեկնման (ժամանման) մասին
- 4) Համապատասխան ՔՊ ծառայությունների հետ համատեղ կազմակերպում է մեկնող (ժամանող) բնակչության պաշտպանությունը և համակողմանի ապահովումը:

II. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Կազմակերպում է բնակչության հավաքը, հաշվառումը և ուղարկումը տեղաբաշխման կետեր տրանսպորտով և հետիոտն կարգով:

11. Զեկուցում է տարահանման հանձնաժողովին բնակչության քանակի և ժամանման /մեկնման/ ժամկետների մասին:

12. Կազմակերպում է հավաքակայանում գտնվող բնակչությանը առաջին բժշկական օգնության ցուցաբերումը:

13. Ապահովում է հասարակական կարգի պահպանումը, բնակչության պատսպարումը:

III. ՏԱՐԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

14. Դիմավորում է ժամանող գնացքները, ավտոմոբիլային և հետիոտն շարասյուները և իջեցման կետի վարչակազմի հետ համատեղ ապահովում է բնակչության իջեցումը:

15. Կազմակերպում է մարդկանց ժամանակավոր տեղավորումը մոտակա բնակավայրերում:

16. Բնակչությանը ուղարկում է մշտական տեղակայման վայրեր:

17. Զեկուցում է համայնքի տարահանման հանձնաժողովին բնակչության քանակի և ժամանման (մեկնման) ժամկետների մասին:

18. Կազմակերպում է բնակչության բժշկական օգնության ցուցաբերումը:

19. Ապահովում է հասարակական կարգի պահպանումը և բնակչության պատսպարումը ՔՊ ազդանշաններով:

20. Դիմավորում է ժամանող ավտոմոբիլային և հետիոտն շարասյուները և իջեցման կետի վարչակազմի հետ համատեղ ապահովում է բնակչության ընդունումը, հաշվառումը և տեղաբաշխումը:

IV. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏԻՈՏՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՇԱՐԱՍՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Հետիոտն շարասյան պետը նշանակվում է համայնքի (օրյեկտի) քաղաքաշտպանության պետի հրամանով:

22. Հետիոտն շարասյան պետի հիմնական խնդիրն է ապահովել կարգ ու կանոնն ու կազմակերպվածությունը շարասյունում, շարասյան երթը ըստ տրված երթուղու և ելակետով ժամանակին անցումը:

23. Հետիոտն շարասյան պետը ենթարկվում է քաղաքաշտպանության շտաբի պետին, համայնքի (օրյեկտի) տարահանման հանձնաժողովի ներկայացուցչին և տարահանման հավաքակայանի պետին:

24. Հետիոտն շարասյան պետը պարտավոր է մինչ տարահանման անցկացման վերաբերյալ հրահանգ ստանալը իմանալ շարասյունում տարահանվող բնակչության կազմը և թվաքանակը, շարասյունը բաժանել խմբերի ըստ ցուցակի, նշանակել խմբերի ավագներ, նախօրոք ուսումնասիրել երթուղին:

25. Տարահանման անցկացման վերաբերյալ կարգադրությունը ստանալուց հետո՝

1) սահմանված ժամկետում ներկայանում է տարահանման հավաքակայան և նրա վարչակազմի հետ համատեղ կազմավորում է շարասյունը.

2) համայնքի /օրյեկտի/ տարահանման հանձնաժողովի նախագահից ստանում է քաղվածք երթի սխեմայից և տարահանվող բնակչության ցուցակը.

3) նշված ժամկետում շարասյունը դուրս է բերում ելման կետ, զեկուցում երթուղու պետին և նրա թույլտվությամբ սկսում շարժվել ըստ երթուղու:

26 Երթի ժամանակ՝

1) շարասյունը տանում է նշված երթուղով, ապահովելով կարգավորման կետերի անցումը սահմանված ժամկետներում:

2) Երթի ընթացքում և դադարի վայրերում պահպանում է կարգապահությունը և կարգ ու կանոնը շարասյունում, ձեռք է առնում միջոցներ հետ մնացածներին հավաքելու և հիվանդներին օգնություն ցույց տալու համար:

3) «Օդային տազնապ» կամ «Ուշադրություն բոլորին» ազդանշան ստանալու դեպքում անհապաղ այն հասցնում է տարահանվողներին և ձեռնարկում է միջոցներ մարդկանց պատսպարելու համար:

4) Ճառագայթային աղտոտման սպառնալիքի դեպքում մարդկանց թաքցնում է տեղում կամ երթուղու պետի ցուցումով դուրս է բերում նրանց անվտանգ շրջաններ:

27. Հավաքակայան ժամանելուն պես հաղորդում է տարահանման տեղական հանձնաժողովին շարասյան կազմի ու թվաքանակի մասին և մասնակցում է մարդկանց տեղավորման աշխատանքին:

V. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԱՎՏՈՇԱՐԱՍՅԱՆ ՊԵՏԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Ավտոշարասյան պետը նշանակվում է համայնքի (օբյեկտի) ՔՊ պետի հրամանով և ենթարկվում է համայնքի (օբյեկտի) տարահանման հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև տարահանման հավաքակայանի պետին:

29. Ավտոշարասյան պետը պատասխանատու է տեղափոխվող բնակչության շրջանում կարգ ու կանոնի պահպանման համար:

30. Ավտոշարասյան պետը պարտավոր է՝

1) մինչև բնակչության տարահանման անցկացման վերաբերյալ կարգադրություն ստանալը՝ ա. ստուգում է տեղափոխվող բնակչության կազմը և քանակը, որոշում է ինչպիսի մեքենաներ են հատկացված, նրանց քանակը, հավաքակայանի տեղը, մարդկանց ավտոտրանսպորտ նստեցնելու տեղը, տեղավորման երթուղին, իջեցման տեղը, ավտոմեքենաներով տեղափոխման կանոնները, անվտանգ գոտում նրանց տեղավորման վայրը

բ. յուրաքանչյուր մեքենայում նշանակում է ավագներ և հրահանգավորում նրանց:

2) տարահանման մասին որոշում ընդունելուց հետո համայնքի (օբյեկտի) տարահանման հանձնաժողովից ստանում է

ա. ավտոշարասյունով տեղափոխվող բնակչության ցուցակը

բ. ժամանակին ներկայանում է հավաքակայան և հավաքակայանի ղեկավարության հետ միասին ստուգում է մարդկանց քանակը, նրանց տեղաբաշխումը ըստ ավտոմեքենաների և կազմակերպում է նստեցումը ավտոմեքենաներ

3) երթուղու ամբողջ երկայնքով պահպանում է տեղափոխման կարգն ու կանոնը

4) նշանակված վայր հասցնելուց հետո ապահովում է մարդկանց կազմակերպված իջեցումը:

31. Տարահանման տեղական հանձնաժողովին (ընդունման հավաքակայանին) հանձնում է տարահանվածներին և շարասյան փաստաթղթերը:

VI. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏԻՈՏՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՊԵՏԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Երթուղու պետը նշանակվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումով:

33. Երթուղու պետի հիմնական խնդիրներն են

- 1) ապահովում է ղեկավարումը,
- 2) պահպանում է հասարակական կարգն ու կանոնը և կարգավորում երթուղու շարժումը,
- 3) տարահանման տեղական մարմինների հետ համատեղ ապահովում է տարահանվող բնակչության ուղեկցումը տարահանման վերջնական կետեր սահմանված ժամկետներում.

34. Երթուղու պետը ենթարկվում է քաղաքաշտպանության պետին և տարահանման հանձնաժողովի նախագահին:

35. Երթուղու պետը իրավունք ունի հսկելու ՔՊ պլաններով նախատեսված երթուղու նախապատրաստման միջոցառումների կատարումը, տարահանված բնակչության ապահովման, ինչպես նաև տարահանման վերջնական կետերը նրանց տեղավորման միջոցառումների կատարումը:

36. Երթուղու պետը պարտավոր է՝

- 1) նախօրոք ուսումնասիրել հետիոտն շարասյան երթուղին և սխեման
- 2) բաժանել երթուղին ըստ հատվածների, ղեկավարման խմբերի միջև
- 3) տարահանման մասին որոշում ընդունելուց հետո ՔՊ համապատասխան շտաբից ստանալու երթուղու սխեման, խնդիր դնել ղեկավար խմբերի և հատկացված ուժերի առջև և հսկել դրանց կատարումը.
- 4) հսկողություն իրականացնել տարահանվող բնակչությանը բժշկական օգնություն ցուցաբերման կարգի նկատմամբ.
- 5) կազմակերպել ճառագայթային և քիմիական դիտարկումներ.
- 6) կապ պահպանել հետիոտն և ավտոշարասյան, տարահանման ընդունման հավաքակայանների հետ, կազմակերպել ազդարարումը երթուղու ամբողջ երկայնքով.
- 7) «Օդային տագնապ» կամ «Ուշադրություն բոլորին» ազդանշան ստանալիս անհապաղ փոխանցել շարասյուններին, օգտագործելով կապի բոլոր միջոցները, միջոցառումներ ձեռնարկել պատսպարման համար:

VII. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

37. Հանձնաժողովի նախագահ- ՔՊ պետի տեղակալ

38. Հանձնաժողովի նախագահի տեղակալ

39. Հանձնաժողովի քարտուղար՝

40. ՔՊ ծառայությունների ներկայացուցիչներ.

- 1) Կապի և ազդարարման
- 2) Ինժեներական
- 3) Բժշկական
- 4) Տրանսպորտի
- 5) Առևտրի և սննդի
- 6) Էներգետիկայի
- 7) Բույսերի և կենդանիների պաշտպանության
- 8) Հասարակական կարգի պահպանման
- 9) Նյութատեխնիկական մատակարարման
- 10) Կոմունալ-տեխնիկական
- 11) Բնակչության հատուկ սպասարկումների

41. Հանձնաժողովի աշխատանքային խմբերի պետեր

- 1) Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբի պետ

- 2) Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խմբի պետ
- 3) Տրանսպորտային ապահովման խմբի պետ
- 4) Մենդամբերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խմբի պետ
- 5) Հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման հաշվառման խմբի պետ

VIII. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

42. Տարահանման հանձնաժողովի նախագահը նշանակվում է համայնքի ղեկավարի՝ ՔՊ պետի կարգադրությամբ և ենթարկվում է մարզի ՔՊ պետին:

43. Տարահանման հանձնաժողովի նախագահը պատասխանատու է հնարավոր աղետի գոտուց բնակչության կազմակերպված դուրս բերման ուղղությամբ անցկացվող համալիր միջոցառումների, ինչպես նաև տարահանված բնակչության անվտանգ տարածքներում առաջնահերթ կենսաապահովման միջոցառումներով ապահովված ժամանակավոր տեղաբաշխման կետերում (այսուհետ՝ ԺՏԿ) բաշխման կազմակերպման համար:

44. Տարահանման հանձնաժողովի նախագահը կրում է պատասխանատվություն տարահանման հանձնաժողովի վրա դրված բոլոր խնդիրների ժամանակին և ողջ ծավալով կատարման համար:

45. Նա պարտավոր է՝

Իմանալ տարահանման հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև ստորադաս տարահանման հանձնաժողովների և տարահանման հավաքակալանների նախագահներին,

Իմանալ բոլոր հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում տարահանման միջոցառումների անցկացման ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրները,

Մասնակցել բնակչության տարահանման հետ կապված հիմնական փաստաթղթերի մշակմանն ու ճշտագրմանը,

Իմանալ տարահանման ենթակա բնակչության թվաքանակը, տարահանման միջոցառումների անցկացման ժամկետները, տարահանման փոխադրումներին ներգրավված ավտոմեքենաների և այլ տրանսպորտային միջոցների քանակը,

Տարահանման հանձնաժողովի անձնակազմի հետ պարբերաբար անցկացնել մեթոդական պարապմունքներ տարահանման պլանների և տարահանման միջոցառումների պլանավորման ու անցկացման հետ կապված ղեկավար փաստաթղթերի ուսուցման ուղղությամբ:

46. Սպառնալիքի դեպքում

Ներկայանալ ՔՊ պետին,

Կազմակերպել տարահանման հանձնաժողովի անձնակազմի ազդարարումը և հավաքը սահմանված ժամկետներում,

Ճշգրտել տարահանման հանձնաժողովի անձնակազմի աշխատանքային գրաֆիկը և տալ հանձնարարականներ ստորադաս տարահանման և տարահանվողների ընդունման հանձնաժողովին բոլոր տարահանման մարմինները աշխատանքներին պատրաստականության բերելու ուղղությամբ,

Կապ հաստատել տարահանման մարմինների և տրանսպորտային կազմակերպությունների հետ,

Ճշգրտել տարահանման հանձնաժողովի պլանը և տրանսպորտային միջոցների բաշխման հաշվարկները,

Կազմակերպել տարահանման երթուղիների, ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի և նստեցման կետերի նախապատրաստումը, ճանապարհային նշանների ու ցուցանականների տեղադրումը,

Կազմակերպել կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության ստուգումը,

Բոլոր տարահանման մարմիններում սահմանել ղեկավար կազմի շուրջօրյա հերթապահություն,

Ընդունել պատրաստականության մասին ենթակա տարահանման մարմինների զեկույցները և զեկույցել ՔՊ պետին:

47. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում

Ներկայանալ պետին մոտ և ճշտգրտել տարահանման հանձնաժողովի խնդիրները տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում,

Կազմակերպել տարահանման հանձնաժողովի անդամների հավաք, ճշգրտել նրանց խնդիրները և տալ հանձնարարականներ ենթակա տարահանման և տրանսպորտային մարմիններին՝ (պլանի կամ աղետի գոտում ստեղծված իրավիճակի գնահատականի համաձայն) բնակչության տարահանման անցկացման ուղղությամբ,

Պատրաստականության բերել բոլոր տարահանման մարմիններ և կազմակերպել նրանց հետ անընդհատ կապ,

Կազմակերպել տարահանման ենթակա բնակչության հավաքը, նախապատրաստումը և փոխադրումը անվտանգ տարածքներ,

Վերահսկել նստեցման կետերին տրանսպորտային միջոցների ժամանակին հասցնումը,

Կազմակերպել անապաստան մնացած բնակչության առաջնահերթ կենսաապահովումը,

Կազմակերպել բնակչության տարահանման, պլանավորված անվտանգ տարածքներում բնակչության տեղաբաշխման ընթացքի մասին տվյալների հավաքը,

ՔՊ ծառայությունների հետ փոխհամագործակցության ժամանակ կազմակերպել տարահանված բնակչության ապահովումն ու պաշտպանությունը,

Ժամկետային տեղեկացման քարտում նշված ժամկետներում տարահանման միջոցառումների ընթացքի մասին զեկույցել ՔՊ պետին:

IX. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

48. Տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը ենթարկվում է հանձնաժողովի նախագահին, իսկ նրա բացակայության ժամանակ կատարում նրա պարտականությունները լրիվ ծավալով: Տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում նա հանդիսանում է տարահանման հանձնաժողովի ողջ անձնակազմի անմիջական ղեկավարը:

49. Նա պարտավոր է՝

Իմանալ տարահանման հանձնաժողովի բոլոր անդամներին, ինչպես նաև ստորադաս տարահանման հանձնաժողովների և տարահանման հավաքակետերի նախագահներին.

Իմանալ տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում հանձնաժողովի անդամների ազդարարման կարգը և հանձնաժողովի վրա դրված խնդիրները.

Հանձնաժողովների նախագահի հետ միասին մասնակցել բնակչության տարահանման պլանի մշակման ու ճշգրտման.

Մասնակցել տարահանման հանձնաժողովի փասթաթղթերի մշակմանը

Տարահանման հանձնաժողովի նախագահի հետ միասին տարահանման մարմինների ղեկավարման, կապի ու ազդարարման համակարգերը նախապատրաստել և պահել մշտական պատրաստականության մեջ.

Իմանալ տարահանման ենթակա բնակչության թվաքանակը, միջոցառումների անցկացման ժամկետները և տարահանման փոխադրումներին ներգրավված տրանսպորտի քանակը.

Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների հետ փոխհամագործակցության ժամանակ մշակել միջոցառումներ տարահանված բնակչությանը սննդամթերքով, ջրով, էլեկտրաէներգիայով և առաջին անհրաժեշտության իրերով ապահովելու համար.

50. Սպառնալիքի դեպքում

Կազմակերպել տարահանման հանձնաժողովի անձնակազմի ազդարարումը, վերահսկել նրանց հավաքը և զեկույցել տարահանման հանձնաժողովի նախագահին.

Տարահանման հանձնաժողովի նախագահի անունից պատրաստել կարգադրություններ և կազմակերպել դրանց հասցնումը կատարողներին և իրականացնել կատարման հսկողությունը, Վերահսկել ստորադաս տարահանման մարմինների պարտականությունը, Տարահանման հանձնաժողովի աշխատանքային մարմիններում կազմակերպել շուրջօրյա հերթապահություն, Տարահանման հանձնաժողովի անձնակազմի համար կազմակերպել անհատական պաշտպանության միջոցների ստացումը, Մասնակցել կոնկրետ արտակարգ իրավիճակների դեպքում տարահանման պլանի ճշգրտմանը:

51. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում

Հավաքել տարահանման հանձնաժողովի անդամներին և զեկուցել հանձնաժողովի նախագահին, Տարահանման հանձնաժողովի նախագահի անունից պատրաստել կարգադրություններ և կազմակերպել դրանց հասցնումը կատարողներին և իրականացնել կատարման հսկողությունը, Ստուգել ՔՊ տրանսպորտային ծառայության և ստորադաս տարահանման մարմինների հետ կապի առկայությունը, Ճշգրտել տարահանման միջոցառումներին տարահանման մարմինների պատրաստականությունը և զեկուցել հանձնաժողովի նախագահին, Վերահսկել նստեցման կետերին տրանսպորտային միջոցների հասցնումը, Վերահսկել տարահանմանն ենթակա բնակչության հավաքը, նախապատրաստումը փոխադրման և փոխադրումը անվտանգ տարածքներ, Ընդհանրացնել տարահանման ընթացքի, տարահանման բնակչության ընդունման և տեղաբաշխման մասին ենթակա տարահանման հանձնաժողովներից ստացված տվյալները և զեկուցել հանձնաժողովի նախագահին, Իմանալ ստեղծված իրադրությունը և տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, Ժամկետային տեղեկացման քարտում նշված ժամկետներում տարահանման միջոցառումների ընթացքի և ավարտի մասին պատրաստել ամփոփագիր:

X. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

52. Տարահանման հանձնաժողովի քարտուղարը ենթարկվում է հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նրանց հանձնարարությամբ տարահանման հանձնաժողովի անձնակազմին և ենթակա տարահանման մարմիններին հասցնում է տեղեկատվություններ, հանձնարարականներ և տարբեր բնույթի հրամաններ:

53. Նա պարտավոր է՝

Իմանալ իր պարտականությունները, տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը և հանձնաժողովի առջև դրված խնդիրները: Իմանալ ենթակա տարահանման մարմինների տեղաբաշխման վայրերը և նրանց ազդարարման կարգը: Մասնակցել տարահանման հանձնաժողովի փաստաթղթերի կազմմանը: Տարահանման հանձնաժողովի կողմից որևէ մեկի հեռանալու դեպքում զեկուցել նախագահին և միջոցներ ձեռք առնել հանձնաժողովի կազմը լրացնելու համար:

54. Սպառնալիքի դեպքում

Ստանալ տարահանման հանձնաժողովի փաստաթղթերը: Ստուգել հանձնաժողովի անդամների հավաքը և զեկուցել նախագահին: Ենթակա տարահանման մարմինների համար պատրաստել տարահանման հանձնաժողովի նախագահի կարգադրությունը:

Ստանալ անհատական պաշտպանության միջոցները և բաժանել հանձնաժողովի անդամներին:
Ստուգել տարահանման հանձնաժողովի պատրաստականությունը և զեկուցել հանձնաժողովի նախագահի տեղակալին:

Ճշգրտել տարահանման հանձնաժողովի անձնակազմի պատասպարման հաշվարկը, պատրաստականության բերման կարգը, անձնակազմի գործողությունները «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում և հասցնել դրանք հանձնաժողովի անդամներին ու աշխատանքային խմբերի անձնակազմներին:

Վարել ստացված և տրված հրամանների, կարգադրությունների ու զեկուցագրերի հաշվառման մատյանները:

55. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում

Ստուգել տարահանման հանձնաժողովի անձնակազմի հավաքը և զեկուցել հանձնաժողովի նախագահի տեղակալին,

Պատրաստել տարահանման հանձնաժողովի նախագահի կարգադրությունը և հասցնել ենթակա տարահանման մարմիններին,

Վարել ստացված և տրված հրամանների, կարգադրությունների ու զեկուցագրերի հաշվառման մատյանները,

Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբի պետի հետ համատեղ հավաքել և ընդհանրացնել ենթակա տարահանման մարմինների տվյալները բնակչության տարահանման, ինչպես նաև տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման ընթացքի մասին,

Իմանալ տարահանված բնակչության վիճակը, ինչպես են նրանք ապահովվում սննդամթերքով և առաջին անհրաժեշտության իրերով,

Իմանալ բոլոր ԺՏԿ-երի, ԵԲԿ-երի հնարավորությունները և պահպանել նրանց հետ անընդհատ կապ,

Ժամանակին զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին ստացված ահազանգերի, կարգադրությունների և զեկուցագրերի մասին:

XI. ՎՏԱՆԳԱՎՈՐ ՏԱՐԱԾՔԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

56. Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

57. Նա պարտավոր է՝

Ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները.

Ունենալ խմբի հաստիքա-պաշտոնական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը.

Իմանալ վտանգավոր տարածքից դուրս բերման ենթակա բնակչության թվաքանակը և նրանց հաշվառման կարգը.

Ունենալ անհրաժեշտ տեղեկություններ՝ ԺՏԿ-երի, ԵԲԿ-երի քանակը և տեղաբաշխման վայրերը.

Ունենալ տարբեր բնույթի արտակարգ իրավիճակների կանխատեսման դեպքում բնակչության տարահանման հաշվարկները

Ունենալ տարահանման միջոցառումների համար պլանավորված տրանսպորտի հաշվարկը

Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պատրաստականությունների կատարման ուղղությամբ.

Մասնակցություն ցուցաբերել բնակչության տարահանման պլանի մշակմանը.

Մասնակցություն ցուցաբերել վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբերի անձնակազմների հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին:

58. Սպառնալիքի դեպքում

Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին:

Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին:

Ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները:

Կապ հաստատել վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման ենթակա հաշվառման խմբերի հետ:

Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ:

Ճշգրտել համայնքների վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին:

Մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը:

Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

59. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում

Կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին:

Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին:

Կազմակերպել հսկողություն տարահանման միջոցառումներին անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն տարահանման միջոցառումների արդյունքների մասին:

Տարահանման հանձնաժողովի նախագահի համար հանձնաժողովի հետ միասին պատրաստել զեկույց տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

XII. ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

60. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

61. Նա պարտավոր է՝

Ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները:

Ունենալ խմբի հաստիքա-պաշտոնական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը:

Իմանալ անվտանգ տարածքներում տեղաբաշխման ենթակա բնակչության թվաքանակը և նրանց հաշվառման կարգը:

Ունենալ համայնքի տարահանման մարմինների մասին անհրաժեշտ տեղեկություններ՝ ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի քանակը և տեղաբաշխման վայրերը:

Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պատրաստականությունների կատարման ուղղությամբ:

Մասնակցություն ցուցաբերել բնակչության տարահանման պլանի մշակմանը:

Մասնակցություն ցուցաբերել անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման ենթակա խմբերի անձնակազմների հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին:

62. Սպառնալիքի դեպքում

Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին:

Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին:

Ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները:

Կապ հաստատել համայնքի վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբերի հետ:

Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ:

Ճշգրտել վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին:

Մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը:

Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

63. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում

Կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին:

Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին:

Կազմակերպել անվտանգ տարածքներում տարահանված բնակչության տեղաբաշխումը ԺՏԿ-երում:

Իրականացնել անվտանգ տարածքներում տեղաբաշխված բնակչության հաշվառումը:

Կազմակերպել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն տարահանման միջոցառումների արդյունքների մասին ըստ համայնքների:

Տարահանման հանձնաժողովի նախագահի համար հանձնաժողովի քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց տարահանման միջոցառումների ընթացքի մասին:

XIII. ՏՐԱՆՍԴՈՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

64. Տրանսպորտային ապահովման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

65. Նա պարտավոր է՝.

Իմանալ խմբի անձնակազմը և նրա խնդիրները:

ՈՒՆԵՆԱԼ խմբի հաստիքա-պաշտոնեական կազմը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը:

Իմանալ բնակչության տարահանման միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների թվաքանակը:

Իմանալ ավտոշարասյունների ստեղծման բազաները և նրանց ազդարարման, պատրաստականության բերման ու տարահանման միջոցառումներին ներգրավման կարգը:

Ունենալ համայնքի տարահանման մարմնի մասին անհրաժեշտ տեղեկություններ:

Իմանալ տրանսպորտային ապահովման խմբերի տեղաբաշխման վայրերը և նրանց հետ կապի պահպանման կարգը:

Իմանալ տարահանման երթուղիների տեխնիկական բնութագիրը:

Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պարտականությունների կատարման ուղղությամբ:

Տրանսպորտային ծառայության հետ համատեղ ապահովել նախապատրաստումը տարահանման միջոցառումներին:

66. Սպառնալիքի դեպքում

Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին:

Ճշգրտել խնդիրները խմբի անձնակազմի, ստանալ և նրանց բաժանել անհատական պաշտպանության միջոցները:

Կապ ստեղծել տրանսպորտային ծառայության և ենթակա տրանսպորտային ապահովման խմբերի հետ:

Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկությունները:

Վերահսկել տրանսպորտային միջոցների նախապատրաստումը տարահանման միջոցառումներին:

ԱԻ ծագման դեպքում ճշգրտել բնակչության տարահանման պլանը և երթուղիները իրադրության հնարավոր տեսության համաձայն:

Մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը:

Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

67. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում

Կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը:

Ճշգրտել տարածքում ստեղծված իրադրությունը և առկա տրանսպորտային միջոցների ու տարահանման երթուղիների վիճակը:

Ճշգրտել տարահանման երթուղիները և տարահանման մարմինների առջև դրված խնդիրները բնակչությանը վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ տարահանելու ուղղությամբ:

Ապահովել տրանսպորտային միջոցների հասցնումը ՏՀԿ-երին, ՏՀԿ-երին և տրանսպորտի նստեցման կետերին:

Կազմակերպել հսկողություն տրանսպորտային միջոցների աշխատանքի վրա: Ժամանակին տեղեկացնել տարահանման հանձնաժողովի նախագահին տրանսպորտի աշխատանքի գրաֆիկի խախտման մասին և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար:

XIV. ՄՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ, ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

68. Մենդամթերքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

69. Նա պարտավոր է՝

ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները:

Ունենալ խմբի հաստիքա-պաշտոնական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը:

Իմանալ տարահանման ենթակա բնակչության և նյութական արժեքների թվաքանակը, նրանց տեղաբաշխման վայրերը և հաշվառման կարգը:

Կոնկրետ ԱԻ դեպքում ըստ կանխատեսման նախօրոք պլանավորել տարահանմանը ենթակա նյութական արժեքների և նրանց համար նախատեսված տրանսպորտային միջոցների հաշվարկները:

Ունենալ օբյեկտների և նրանցում պահվող նյութական արժեքների պաշարների ցանկն ու թվաքանակը:

Ունենալ համայնքի տարահանման մարմնի մասին անհրաժեշտ տեղեկություններ՝ ԺՏԿ-երի, ԵԲՎ-երի, քանակը և տեղաբաշխման վայրերը:

Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց պարտականությունների կատարման ուղղությամբ:

Մասնակցություն ցուցաբերել բնակչության տարահանման պլանի մշակմանը:

Մասնակցություն ցուցաբերել սննդամթերքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման ենթակա խմբերի անձնակազմների հետ անցկացվող պրակտիկ ուսուցումներին ու վարժանքներին:

70. Սպառնալիքի դեպքում

Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին:

Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին:

Ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները:

Կապ հաստատել համայնքի սննդամթերքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման խմբերի հետ:

Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ:

Ճշգրտել սննդամթերքների և նյութական արժեքների պաշարների հաշվառման ենթակա խմբերի պատրաստականությունը տարահանման միջոցառումներին և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին:

Մշտապես ղեկավարել խմբի անձնակազմի աշխատանքը:

Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

Ճշգրտել հնարավոր խոցման օջախից նյութական արժեքների դուրս բերման համար նախատեսված տրանսպորտային միջոցների թվաքանակը:

71. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում

Կազմակերպել խմբի անձնակազմի հավաքը և զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին:

Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին:

Նյութական արժեքների պաշարների տարահանման անհրաժեշտության դեպքում ապահովել դուրս բերումը, հաշվառումը, իրականացնել:

XV. ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԳՈՏԻ ԴՈՒՐՍ ԲԵՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԽՄԲԻ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

72. Հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման հաշվառման խմբի պետը ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և տեղակալին: Նա հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը:

73. Նա պարտավոր է՝

1. Ճանաչել խմբի անձնակազմին և իմանալ նրանց խնդիրները:

ՈՒՆԵՆԱԼ խմբի հաստիքա-պաշտոնական ցուցակը, իմանալ խմբի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգ:

Իմանալ վտանգավոր տարածքից դուրս բերման ենթակա հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների թվաքանակն ու նրանց հաշվառման կարգը:

ՈՒՆԵՆԱԼ համայնքի տարահանման մարմնի և հիվանդանոցների մասին անհրաժեշտ տեղեկություններ:

ՈՒՆԵՆԱԼ հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների տարահանման համար պլանավորված տրանսպորտային միջոցների հաշվարկը:

Անցկացնել պարապմունքներ խմբի անձնակազմի հետ նրանց ֆունկցիոնալ պարտականությունների կատարման ուղղությամբ:

Մասնակցություն ցուցաբերել բնակչության տարահանման պլանի մշակմանը:

Մասնակցություն ցուցաբերել հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների հետ անցկացվող ուսուցումներին ու վարժանքներին:

74. Սպառնալիքի ստանալու

Իրականացնել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը, արդյունքների մասին զեկուցել տարահանման հանձնաժողովի քարտուղարին:

Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին:

Ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները:

Կապ հաստատել հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման ենթակա հաշվառման խմբերի հետ:

Իմանալ իրադրությունը և ժամանակին հասցնել ենթականերին անհրաժեշտ տեղեկություններ:

Ճշգրտել հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների անվտանգ գոտի դուրս բերման հաշվառման խմբերի պատրաստականությունը և զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին:

Մշտապես ղեկավարել անձնակազմի աշխատանքը:

Կազմակերպել անձնակազմի հերթապահությունը:

75. Տարահանման միջոցառումների անցկացման դեպքում

Կազմակերպել անձնակազմի հավաքը և զեկուցել տարահանման քարտուղարին:

Տարահանման հանձնաժողովի նախագահից ճշգրտել խմբի խնդիրները և հասցնել անձնակազմին:

Կազմակերպել տարահանված հիվանդանոցների անձնակազմի և հիվանդների տեղաբաշխումը անվտանգ գոտում գտնվող հիվանդանոցներում և այլ նախօրոք պլանավորված շինություններում:

Կազմակերպել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման ընթացքի նկատմամբ և պատրաստել ամփոփիչ տեղեկատվություն տարահանման միջոցառումների արդյունքների մասին Տարահանման հանձնաժողովի նախագահի համար հանձնաժողովի քարտուղարի հետ միասին պատրաստել զեկույց տարահանման միջոցառումների ընթացքի մասին:



Հավելված 6

Հրազդան համայնքի ղեկավարի
2020թ. հունվարի 31-ի N 103 որոշման

ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ամենօրյա գործունեության ժամանակ

- 1) Տարահանման հանձնաժողովի հետ համատեղ մշակում է ՏՀԿ-ի և տարահանումը պլանավորող փաստաթղթերը, որոնք ժամանակին ճշգրտվում և հստակեցվում են:
- 2) Պլանավորում տարահանման ժամանակ ՏՀԿ-ի կողմից իրականացվող միջոցառումները,
- 3) Ճշգրտում ՏՀԿ-ի կցագրված տարածքն ու այդ տարածքում բնակվող բնակչության թիվը:
- 4) Զեկուցում է տարահանման հանձնաժողովին բնակչության քանակի և ժամանման (մեկնման) ժամկետների մասին:
- 5) Կազմակերպում է հավաքակայանում գտնվող բնակչությանն առաջին բժշկական օգնության ցուցաբերումը:
- 6) Ապահովում է հասարակական կարգի պահպանումը, բնակչության պատսպարումը:

2. Տարահանման հավաքակայանը տարահանման հանձնաժողովի նախագահի որոշմամբ կարող է վերածվել տարահանվածների ընդունման հավաքակայան (ԸՀԿ) և իրականացնել բնակչության ընդունումը: Այդ դեպքում նրա խնդիրներն են՝

- 1) Դիմավորում է ժամանող գնացքներն, ավտոմոբիլային և հետիոտն շարասյուները, ապահովում է բնակչության իջեցումը:
- 2) Կազմակերպում է մարդկանց ժամանակավոր տեղավորումը:
- 3) Բնակչությանը տեղափոխում է երկարատև բնակության կետեր:
- 4) Զեկուցում է տարահանման հանձնաժողովին բնակչության քանակի և ժամանման (մեկնման) ժամկետների մասին:
- 5) Կազմակերպում է բնակչության բժշկական օգնության ցուցաբերումը:
- 6) Ապահովում է հասարակական կարգի պահպանումը և բնակչության պատսպարումը ՔՊ ազդանշաններով:

3. Պատրաստականության բերման կարգադրություն ստանալիս

- 1) Ճշտում է ՏՀԿ-ի միջոցով բնակչության տարահանման պլան-ժամանակացույցը:
- 2) Կազմակերպում և անցկացնում է ՏՀԿ-ի (ԸՀԿ) ծավալման միջոցառումները և պատրաստության բերելը:
- 3) Կազմակերպում է տարահանվող բնակչության համար հավաքակայանների պատրաստությունը:
- 4) Տրանսպորտային կազմակերպությունների հետ համատեղ ճշտում է ՏՀԿ (ԸՀԿ) ժամանող բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների օգտագործման կարգը բնակչությանը տարահանելու և տարաբաշխելու համար:
- 5) Հսկողություն է սահմանում ՏՀԿ-ի (ԸՀԿ) սահմաններում տարահանվող և բաշխվող բնակչության համար պաշտպանական շինությունների և պարզագույն թաքստոցների շինարարության, պատրաստականության ուղղությամբ:

4. Բնակչության տարահանման կարգադրություն ստանալիս

- 1) Իրականացնում է ժամանող բնակչության գրանցումը և բաշխումը ավտոշարասյուների միջև (ավտոմեքենաների, գնացքների, վագոնների):

- 2) Տանում է տարահանվող բնակչության հաշվառումը ըստ բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների և դրա վերաբերյալ տեղեկություններ է հայտնում տարահանման հանձնաժողով՝ ըստ ժամանակի, օբյեկտների և տրանսպորտի տեսակների:
 - 3) Կազմակերպում է ՏՀԿ-ում (ԸՀԿ) գտնվող հիվանդների բժշկական օգնությունը:
 - 4) Կազմակերպում է ՏՀԿ-ում (ԸՀԿ) հասարակական կարգը և <Օդային տագնապ> ազդանշանի դեպքում ՏՀԿ-ում (ԸՀԿ) գտնվող բնակչության պատսպարումը:
5. Ընդունման, հաշվառման և բաշխման խումբ
- 1) Իրականացնել ՏՀԿ (ԸՀԿ) ժամանող բնակչության հաշվառումը և շարասյունների կազմավորման խումբ ներկայացնել համապատասխան տեղեկանք,
 - 2) ըստ շարասյունների կազմավորման խմբի տվյալների կատարել տարահանվող և տարաբաշխվող բնակչության հաշվառում,
 - 3) սահմանված կարգով ՏՀԿ-ի (ԸՀԿ) պետին գրավոր զեկուցել յուրաքանչյուր շարասյան անվտանգ գոտի մեկնման մասին,
 - 4) վարել բնակչության տարահանման և տարաբաշխման ժամային գրաֆիկ,
 - 5) ՏՀԿ-ի (ԸՀԿ) պետին հաղորդել տեղեկություններ ժամանող-տարահանվող օբյեկտների մասին,
 - 6) մշտապես համագործակցել տարահանման շարասյունների խմբի, ինչպես նաև հասարակական կարգի պահպանման ծառայության հետ,
 - 7) կապ պահպանել օբյեկտների տարահանման հանձնաժողովների հետ:
6. Ավտոշարասյունների կազմավորման խումբ
- 1) կատարել տարահանվող բնակչության բաշխումը (վերաբաշխումը) ըստ ավտոշարասյունների (ավտոմեքենաների, վագոնների),
 - 2) իրականացնել մարդկանց կազմակերպված բաշխումը (ըստ նստատեղերի) և նրանց ժամանակին մեկնումը անվտանգ գոտի,
 - 3) գրավոր տեղեկացնել ընդունման, հաշվառման և բաշխման շարասյունների մեկնման մասին,
 - 4) կապ պահպանել շարասյուններ կազմավորող ավտոձեռնարկությունների հետ, միջոցներ ձեռնարկել շարասյունների ավտոմեքենաներով համալրումը և դրանց ժամանակին ՏՀԿ (ԸՀԿ) ժամանելու համար,
 - 5) տարահանվողների ժամանակին ճանապարհելու խոչընդոտող հանգամանքների մասին իսկույն զեկուցել ՏՀԿ-ի (ԸՀԿ) պետին (տեղեկատու սեղան):
7. Հասարակական կարգի պահպանման խումբ
- 1) Կազմակերպել ՏՀԿ-ում (ԸՀԿ) պարեկային ծառայություն, պահպանության երթևեկության կառավարման կետերի միջոցով, համաձայն մշակված սխեմայի:
 - 2) սահմանել հսկողություն ՏՀԿ-ում (ԸՀԿ) գիշերային ժամերին լուսաքողարկման միջոցառումների իրականացմանը,
 - 3) ապահովել ՏՀԿ-ում (ԸՀԿ) հասարակական կարգի պահպանումը և արգելել օտար անձանց մուտքը տարածք,
 - 4) կազմակերպել բնակչության պատսպարումը <Օդային տագնապ> ազդանշանի դեպքում,
 - 5) մշտապես համագործակցել հասարակական կարգի պահպանության ծառայության հետ:
8. Տեղեկատու սեղան
- 1) կազմակերպել տեղեկատու սեղանի գործունեությունը աշխատանքի ողջ ընթացքում,
 - 2) իմանալ իրադրությունը՝ պետի և տեղակալի գտնվելու վայրը, մեքենաների նստեցման կետերը, պարեկային ծառայության կազմակերպումը,
 - 3) մշտական կապ պահպանել տարահանման հանձնաժողովի հետ,
 - 4) ՏՀԿ-ի (ԸՀԿ) պետին զեկուցել տարահանման վերադաս մարմինների ցուցումների և կարգադրությունների մասին,
 - 5) ժամանակին տեղեկացնել տարահանման հանձնաժողովին տարահանման ընթացքի մասին:

9. Պարետ

- 1) կազմակերպել և պահպանել հաստատված կարգը ՏՀԿ-ի շենքում և տարածքում,
- 2) ապահովել աշխատանքային անհրաժեշտ ունեցվածքը, գույքը, սարքավորումները, ցուցատախտակները և ցուցանակները,
- 3) պատրաստել աշխատանքների համար անհրաժեշտ սենյակները, որոշել և նշել տարահանվողների համար անհրաժեշտ տեղավորման վայրերը, նրանց պատրաստման վայրերը «Օդային տանապ» ազդանշանի ստացման ժամանակ, ինչպես նաև ավտոմեքենաների նստելավայրերը,
- 4) ստուգել և ապահովել կապի և լրատվության միջոցների աշխատունակությունը, միջոցներ ձեռնարկել դրանց վերականգնելու ուղղությամբ կապի ծառայության և տեղեկատու բյուրոյի միջոցով,
- 5) նախապատրաստել տարահանվողներին ընդունող պաշտպանական շինությունները:

10. Մոր և մանկան սենյակ

- 1) ապահովել կերակրող մայրերի և երեխաների ընդունումը, տեղավորումը և նրանց խնամքը,
- 2) ապահովել սենյակների կարգ ու կանոնը և սանիտարական վիճակը,
- 3) տեղեկացնել մայրերին ղեկավար կազմից ստացված կարգադրությունների և ազդանշանների մասին, ցուցաբերել օգնություն դրանց կատարման ուղղությամբ:

11. Բժշկական կետ

- 1) կազմակերպել ՏՀԿ-ում գտնվող հիվանդների ամբուլատոր բուժօգնություն,
- 2) հսկողություն սահմանել շենքի և տարածքի սանիտարական վիճակի պահպանման ուղղությամբ,
- 3) հսկել ժամանող տրանսպորտային միջոցների սանիտարական վիճակը՝ տարահանվող բնակչության տեղափոխման համար,
- 4) միջոցներ ձեռնարկել տարահանվող բնակչության շրջանում ի հայտ եկած վարակիչ հիվանդություններ ունեցող մարդկանց մեկուսացնելու համար,
- 5) բժշկական ծառայության պետի ցուցումով կատարել շտապ կանխարգելիչ միջոցներ:

12. Տարահանման հավաքակայանի պետը

1) ՏՀԿ պետը նշանակվում է համայնքի ղեկավարի որոշմամբ: Նա ենթարկվում է տարահանման հանձնաժողովի նախագահին և մարզային փրկարարական վարչության պետին:

2) ՏՀԿ-ի (ՇՀԿ) պետը պատասխանատու է անձնակազմի համալրման, նրա մշտական պատրաստականության, ինչպես նաև բնակչության տարահանման և տեղաբաշխման աշխատանքների կազմակերպման համար: Նա հանդիսանում է բնակչության տարահանման և տեղաբաշխման ընթացքում ամբողջ անձնակազմի անմիջական պետը:

12. ՏՀԿ-ի պետը պարտավոր է

12.1 Ամենօրյա գործունեության ժամանակ

- 1) Իմանալ իր պարտականությունները, ՏՀԿ-ի խնդիրները և նրա կազմակերպական կառուցվածքը,
- 2) իմանալ բնակչության տարահանման և տեղաբաշխման անցկացման կազմակերպումը, հիմնական պահանջները և առանձնահատկությունները,
- 3) համալրել ՏՀԿ-ի կառուցվածքային մարմինները անձնակազմով,
- 4) իմանալ ՏՀԿ-ի կազմակերպման և պատրաստության բերման ժամանակ անձնակազմի կանչերի կարգը,
- 5) նշել ՏՀԿ-ի տեղաբաշխման վայրը, որոշել ՏՀԿ-ի կառուցվածքային մարմինների աշխատասենյակները, տարահանվող բնակչության թաքստոցները, տրանսպորտային

միջոցների նստավայրը, պահպանության, պարեկության և ճանապարհների կառավարման կետերը ՏՀԿ-ում,

- 6) իմանալ տարահանվող բնակչության համար տրանսպորտային միջոցներ տրամադրող կազմակերպությունները և դրանց հետ կապի կարգը,
- 7) իմանալ գրանցված ՏՀԿ-ից տեղափոխվող ավտոշարասյունների /մեքենաների/, գնացքների /վագոնների/ և տարահանվող բնակչության քանակը,
- 8) անձամբ մասնակցել անձնակազմի գործնական ուսուցումներին տարահանման միջոցառումների ժամանակ,
- 9) մշտական կապ պահպանել ՄՓՎ-ի և տարահանման հանձնաժողովի հետ, անձամբ մասնակցել ՏՀԿ-ի տարահանման փաստաթղթերի մշակմանը և ժամանակին ճշգրտմանը:

12.2. Պատրաստականության բերման կարգադրություն ստանալիս

- 1) Ներկայանալ համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահին ՏՀԿ պատրաստականության բերման խնդիր ստանալու համար,
- 2) կազմակերպել ՏՀԿ-ի անձնակազմի ազդարարումը և հավաքը,
- 3) խնդրադրել ՏՀԿ-ի կառուցվածքային մարմինների ղեկավարներին,
- 4) կազմակերպել շուրջօրյա հերթապահություն,
- 5) ճշտել ՏՀԿ-ի անձնակազմի հաստիքները, դրույքային ցուցակը, ձեռնարկել միջոցներ դրանց համալրվածության համար,
- 6) ստուգել աշխատանքները, կատարողներին հանձնել ՏՀԿ-ի փաստաթղթերը,
- 7) ստուգել ՏՀԿ-ի անձնակազմի անհատական պաշտպանիչ միջոցների ստացումը,
- 8) կազմակերպել ՏՀԿ-ի տարածքում գտնվող տարահանվող բնակչության համար նախատեսված պաշտպանական կառույցների պատրաստականությունը, ինչպես նաև պարզագույն թաքստոցների շինարարության հսկողությունը,
- 9) ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ-ին և տարահանման հանձնաժողովի նախագահին զեկուցել ՏՀԿ-ի պատրաստականության բերման և աշխատանքների ծավալման մասին,
- 10) «Օդային տազնապ» ազդանշան ստանալուց ձեռնարկել միջոցառումներ ՏՀԿ-ի անձնակազմը պաշտպանական կառույցներում տեղավորելու համար:

12.3. Բնակչության տարահանման կարգադրություն ստանալիս

- 1) Տարահանման հանձնաժողովի նախագահից ստանալ խնդրադրում՝ բնակչության տարահանում և տարաբաշխում անցկացնելու համար,
- 2) կազմակերպել ՏՀԿ-ի անձնակազմի ազդարարումը և հավաքելը,
- 3) ՏՀԿ-ի անձնակազմին խնդրադրել՝ բնակչության տարահանումը և տարաբաշխումը անցկացնելու համար,
- 4) կազմակերպել և ծավալել անձնակազմի աշխատանքները՝ ավտոշարասյունների և տարահանվող բնակչության ընդունման և մեկնման ուղղությամբ,
- 5) ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ-ին և տարահանման հանձնաժողովի նախագահին զեկուցել ՏՀԿ-ի աշխատունակության պատրաստության մասին,
- 6) կատարել տարահանվողների հաշվառում և ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ-ին ու տարահանման հանձնաժողովի նախագահին զեկուցել բնակչության տարահանման և տարաբաշխման աշխատանքների ընթացքի մասին;
- 7) զեկուցել տարահանման հանձնաժողովի նախագահին տարահանման ընթացքում տեղի ունեցած խափանումների մասին;
- 8) կազմակերպել ՏՀԿ-ի անձնակազմի և բնակչության պատրաստումը «Օդային տազնապ» ազդանշանի դեպքում;

- 9) բնակչության տարահանումը և տեղաբաշխումը ՏՀԿ-ի միջոցով ավարտելուց հետո գրավոր զեկույց ներկայացնել ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ և տարահանման հանձնաժողով, նրանց թույլտվությամբ ավարտել ՏՀԿ-ի աշխատանքները և մեկնել նշված ուղղությամբ:

13. ՏՀԿ-ի պետի տեղակալի պարտականությունները

13.1. ՏՀԿ-ի պետի տեղակալը նշանակվում է համայնքի ղեկավարի որոշմամբ: Նա ենթարկվում է ՏՀԿ-ի պետին, նրա բացակայության ժամանակ կատարում է նրա պարտականությունները և հանդիսանում ՏՀԿ-ի անձնակազմի անմիջական պետը բնակչության տարահանման և տեղաբաշխման ընթացքում:

Նա պարտավոր է

13.2. Ամենօրյա գործունեության ժամանակ

- 1) իմանալ իր պարտականությունները և ՏՀԿ-ի խնդիրները, բնակչության տարահանման և տարաբաշխման կարգը ՏՀԿ-ի միջոցով,
- 2) մասնակցել ՏՀԿ-ի տարահանման փաստաթղթերի մշակմանը, ճանաչել ՏՀԿ-ի անձնակազմին,
- 3) իմանալ ազդարարման և հավաքի կարգը,
- 4) իմանալ ՏՀԿ-ի աշխատանքների տեղաբաշխումը աշխատասենյակներով ավտոտրանսպորտի նստակայանների տեղերը, անձնակազմի և ՏՀԿ-ում գտնվող տարահանվողների պատասպարման տեղերը «Օդային տազնապ» ազդանշանի դեպքում;
- 5) ՏՀԿ պետի ցուցումով անձնակազմի հետ անցկացնել ուսուցում:
- 6) իմանալ ՏՀԿ-ին վերագրված տարահանվող օբյեկտների, բնակչության, ավտոշարասյուների (մեքենաների) քանակները:

13.3. Պատրաստականության բերման կարգադրություն ստանալիս

- 1) ՏՀԿ-ից ստանալ խնդրադրում,
- 2) կազմակերպել անձնակազմի ազդարարումը և հավաքը, տեղաբաշխումը և աշխատանքին պատրաստ լինելը,
- 3) ՏՀԿ-ի պարետի միջոցով կազմակերպել անձնակազմի աշխատասենյակների նախապատրաստումը,
- 4) ստուգել ՏՀԿ-ի անձնակազմի համալրումը,
- 5) մշակել ժամանակացույց և ՏՀԿ-ում կազմակերպել շուրջօյա հերթապահություն;
- 6) հետևել ՏՀԿ-ում եղած պաշտպանական կառույցների, ինչպես նաև նստատեղերի ու թաքստոցների պատրաստականությանը,
- 7) կազմակերպել անհատական պաշտպանության միջոցներով անձնակազմի ապահովումը,
- 8) զեկույցել ՏՀԿ-ի պետին անձնակազմի պատրաստականության մասին:

13.4. Բնակչության տարահանման կարգադրություն ստանալիս

- 1) ՏՀԿ պետից ստանալ բնակչության տարահանման խնդրադրում,
- 2) բնակչության տարահանման և տարաբաշխման ընթացքում ղեկավարել և ուղղություն տալ ՏՀԿ-ի կառուցվածքային մարմիններին,
- 3) հսկողություն սահմանել պահպանության կետերի, ՏՀԿ-ի տարածքում երթևեկության կառավարման, անձնակազմի պատրաստականություն նկատմամբ,
- 4) պատրաստել զեկույցներ ՀՀ ԱԻՆ ՓԾ ՄՓՎ և տարահանման հանձնաժողով՝ բնակչության տարահանման, տարաբաշխման ընթացքի և ավարտի վերաբերյալ;
- 5) ստանալով «Օդային տազնապ» ազդանշան, ձայնով վերարտադրել ազդանշանը, հանձնարարականներ տալ տարահանվող բնակչությանը և ՏՀԿ-ի անձնակազմի պատրաստման համար:

- 6) բնակչության տարահանման և տարաբաշխման ավարտից հետո հավաքել և ստուգել անձնակազմի առկայությունը, ՏՀԿ-ի պետին զեկուցել մեկնելու պատրաստականության մասին:

Ընդունման հաշվառման և բաշխման խմբի պետի պարտականությունները

1. Ընդունման, հաշվառման և բաշխման խմբի պետը նշանակվում է ՏՀԿ-ի պետի հրամանով, որի հիման վրա ստեղծվում է ՏՀԿ-ի վարչակազմը: Նա ենթարկվում է ՏՀԿ-ի պետին և նրա տեղակալին, հանդիսանում է խմբի անձնակազմի անմիջական պետը՝ բնակչության տարահանման և տեղաբաշխման ժամանակ: Նա պարտավոր է իմանալ՝

2. Ամենօրյա գործունեության ժամանակ

- 1) իր խմբի խնդիրները տարահանում և տեղաբաշխում իրականացնելու ընթացքում;
- 2) իր պարտականությունները, ինչպես նաև խմբի անձնակազմի պարտականությունները;
- 3) խմբի անձնակազմի ազդարարման կարգը՝ աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին;
- 4) ՏՀԿ-ի շենքում անձնակազմի աշխատանքի համար հատկացված աշխատասենյակի տեղը;
- 5) խմբի անձնակազմի աշխատանքների համար տարահանման փաստաթղթերի բովանդակությունը և առկայությունը;
- 6) պատրաստել խմբի անձնակազմը, փաստաթղթերի հետ գործնական աշխատանք կատարելու համար;
- 7) ՏՀԿ-ի վերագրված տարահանվող և տեղաբաշխվող բնակչության, օբյեկտների, ավտոշարասյուների (մեքենաների), զնացքների (վագոնների) քանակները անվտանգ գոտի մեկնելու համար:

3. Պատրաստականության բերման կարգադրություն ստանալիս

- 1) կազմակերպել խմբի ազդարարումը և հավաքը;
- 2) ՏՀԿ-ի պետից ստանալու խնդրարդում և այն ծանոթացնել խմբի անձնակազմին;
- 3) նախապատրաստել խմբի անձնակազմին հատկացված սենյակը և սարքավորումները աշխատանքի համար;
- 4) ստանալ և նախապատրաստել տարահանման փաստաթղթերը;
- 5) ճշտել տարահանվող բնակչության ՏՀԿ-ից քաղաքամերձ գոտի մեկնելու պլան-ժամանակացույցը;
- 6) խմբի անձնակազմի համար ստանալ և հատկացնել անհատական պաշտպանության միջոցներ;
- 7) ՏՀԿ-ի պետին զեկուցել խմբի պատրաստականության մասին;
- 8) կազմակերպել համագործակցություն ավտոշարասյուների կազմավորման խմբի, ինչպես նաև տեղեկատու սեղանի հետ փոխադարձ տեղեկությունների փոխանակման հարցերով:

4. Բնակչության տարահանման կարգադրություն ստանալիս

- 1) Ստուգել խմբի պատրաստականությանը և զեկուցել ՏՀԿ-ի պետին;
- 2) ՏՀԿ-ի պետից ստանալ խնդրարդում և այն ծանոթացնել խմբի անձնակազմին;
- 3) գործողության մեջ դնել տարահանման պլան-ժամանակացույցը և կատարել այն սահմանված ժամկետում;
- 4) ստուգել օբյեկտների տարահանման ներկայացուցիչների այցը ՏՀԿ;
- 5) կատարել ՏՀԿ ժամանող բնակչության ընդունումը, հաշվառումը և բաշխումը (ըստ ցուցակների);
- 6) ճշտել ՏՀԿ ժամանող տարահանվող օբյեկտների ժամանման (ուշացման) վերաբերյալ և հաղորդել նոր ընդունված որոշումների մասին;
- 7) մշտապես համագործակցել շարասյուների կազմավորման խմբի հետ;
- 8) կապ պահպանել ՏՀԿ-ին վերագրված օբյեկտների հետ:

Շարայունների կազմավորման խմբի պետի պարտականությունները

1. Շարայունների կազմավորման խմբի պետը նշանակվում է ՏՀԿ պետի հրամանով, որի հիման վրա ստեղծվել է ՀՀԿ-ի վարչակազմը:
2. Նա ենթարկվում է ՏՀԿ-ի պետին և նրա տեղակալին, հանդիսանում է տարահանման և տեղաբաշխման ընթացքում խմբի անմիջական պետը: Նա պարտավոր է իմանալ՝
 3. Ամենօրյա գործունեության ժամանակ
 - 1) իր խմբի խնդիրները՝ տարահանման և տեղաբաշխման ընթացքում;
 - 2) իր պարտականությունները, ինչպես նաև խմբի անձնակազմի պարտականությունները;
 - 3) խմբի անձնակազմի ազդարարումը աշխատամքային և ոչ աշխատամքային ժամերին;
 - 4) խմբի անձնակազմի տեղը ՏՀԿ-ի մասնաշենքում;
 - 5) հիմնական ավտոմեքենաների մակնիշների (վագոնների) տարողությունները;
 - 6) խմբի անձնակազմին պատրաստել փաստաթղթերի հետ գործնական աշխատանքի և խմբի կազմավորումը ՏՀԿ-ի կազմում իրենց պարտականությունները կատարելու համար;
 - 7) ՏՀԿ-ին վերագրված տարահանվող և տեղաբաշխվող բնակչության, օբյեկտների, ավտոշարասյուների (գնացքների) քանակները՝ անվտանգ գոտի մեկնելու համար;
 - 8) ունենալ թիվ 3 ձևով խմբի հաստիքադրույքային ցուցակը:
 4. Պատրաստականության բերման կարգադրություն ստանալիս
 - 1) Կազմակերպել խմբի անձնակազմի ազդարարումը և հավաքը ՏՀԿ-ում;
 - 2) ՏՀԿ պետից ստանալ խնդրադրում և այն ծանոթացնել խմբի անձնակազմին;
 - 3) նախապատրաստել խմբի աշխատանքների համար հատկացված սենյակը և սարքավորումները;
 - 4) ստանալ և նախապատրաստել տարահանման փաստաթղթերը;
 - 5) ճշտել ՏՀԿ տրամադրվող ավտոշարասյուների պլան-ժամանակացույցը;
 - 6) ստանալ և խմբի անձնակազմին բաժանել անհատական պաշտպանության միջոցները;
 - 7) կազմակերպել ընդունման հաշվառման և բաշխման խմբի, տեղեկատու սեղանի հետ, համագործակցություն՝ տարահանման և տեղաբաշխման ընթացքում տեղեկատվության փոխանակման համար;
 - 8) ՏՀԿ-ի պետին զեկուցել խմբի պատրաստականության մասին:
 5. Բնակչության տարահանման կարգադրություն ստանալիս
 - 1) Ստուգել խմբի պատրաստությունը և զեկուցել ՏՀԿ-ի պետին;
 - 2) ՏՀԿ-ի պետից ստանալ խնդրադրում և այն հասցնել անձնակազմին;
 - 3) գործողության մեջ դնել ՏՀԿ ժամանող ավտոշարասյուների պլան-ժամանակացույցը;
 - 4) կատարել տարահանվող բնակչության տարաբաշխումը ըստ ավտոշարասյուների և մեքենաների;
 - 5) կազմակերպել բնակչության նստեցումը ավտոտրանսպորտ, նրանց ճանապարհելը և անվտանգ գոտի մեկնելը;
 - 6) հաշվառել անվտանգ գոտի մեկնող տարահանվող բնակչությունը;
 - 7) տեղեկացնել ընդունման, հաշվառման և բաշխման խումբ՝ յուրաքանչյուր շարայան մեկնման ժամանակի մասին;
 - 8) կապ պահպանել ավտոշարասյուներ կազմող ձեռնարկությունների հետ, ձեռնարկել միջոցներ ժամանակին ներկայանալու ՏՀԿ;
 - 9) տարահանվողներին խոչընդոտող հանգամանքների մասին զեկուցել ՏՀԿ պետին (տեղեկատու սեղան);
 - 10) անձամբ հրահանգել ավտոշարասյուներին՝ անվտանգ գոտի մեկնելուց առաջ

Հասարակական կարգի պահպանման խմբի պետի պարտականությունները

1. Հասարակական կարգի պահպանման խմբի (ՀԿՊԽ) պետը և անձնակազմը նշանակվում է մարզի ՔՊ ՀԿՊ ծառայության պետի հրամանով, որի հիման վրա ստեղծվում է ՏՀԿ-ի վարչակազմը:
2. Նա ենթարկվում է ՔՊ ՀԿՊ ծառայության պետին, նրա տեղակալին և հանդիսանում է խմբի ուղղակի պետը: Նա պարտավոր է իմանալ՝
3. Ամենօրյա գործունեության ժամանակ
 - 1) Իմանալ խմբի կազմը, նրա խնդիրները և հնարավորությունները, անձնակազմի համալրման կարգը;
 - 2) իմանալ պատրաստականության մակարդակը;
 - 3) մշտապես կատարելագործել անձնակազմի ՔՊ պատրաստությունը, կազմակերպել և անձնակազմի հետ անցկացնել ընդհանուր և հատուկ պատրաստության պարապմունքներ;
 - 4) ապահովել անձնակազմի մշտական մարտունակությունը՝ ՏՀԿ-ում խնդիրներ կատարելու համար;
 - 5) ունենալ անձնակազմի ցուցակները, նրանց ազդարարման և հավաքի կարգը;
 - 6) իմանալ ՏՀԿ-ի տեղակայման վայրը, պահակակետերի տեղերը, պարեկության և պարետային կետերը;
 - 7) ունենալ ճանապարհային նշանների և ցուցակների կոմպլեկտ ՏՀԿ-ում՝ նստավայրերում տեղադրելու համար;
 - 8) իմանալ ՏՀԿ-ում ավտոշարայունների և բնակչության շարժման երթուղիները և փողոցները;
 - 9) ունենալ ՏՀԿ-ում ՀԿՊ մշակված սխեմա:
4. Պատրաստականության բերման կարգադրություն ստանալիս
 - 1) Կազմակերպել անձնակազմի (ՀԿՊ) ազդարարումը և հավաքը;
 - 2) ՏՀԿ պետից ստանալ խնդրադրում և ծանոթանալ խմբի անձնակազմին;
 - 3) ՏՀԿ-ի մասնաշենքում խմբի աշխատանքների համար նախապատրաստել համապատասխան աշխատասենյակ;
 - 4) Ճշտել ՏՀԿ-ում ՀԿՊ ծառայության կազմակերպչական սխեման;
 - 5) ստանալ և անձնակազմին բաշխել անհատական պաշտպանության միջոցներ;
 - 6) ՏՀԿ-ի պետին զեկուցել խմբի պատրաստականության մասին:
5. Բնակչության տարահանման կարգադրության ստանալիս
 - 1) ՏՀԿ պետից ստանալ խնդրադրում և այն ծանոթացնել խմբի անձնակազմին;
 - 2) կազմակերպել ՏՀԿ-ում պարետային ծառայություն, տեղադրել պահպանության կետեր, պարեկային և ճանապարհային երթևեկության կարգավորման կետեր՝ համաձայն մշակված սխեմայի;
 - 3) կազմակերպել գիշերային ժամերին ՏՀԿ-ում քողարկման միջոցառումների կատարումը;
 - 4) արգելել կողմնակի անձանց մուտքը ՏՀԿ և նստավայրեր;
 - 5) հաստատել և մշտական կապ պահպանել մարզի ՔՊ ՀԿՊ ծառայության հետ;
 - 6) ապահովել հասարակական կարգի պահպանումը և բնակչության պատսպարումը <Օդային տազնապ> ազդանշանի դեպքում;
 - 7) ձեռնարկել միջոցներ՝ տարահանվողների միջև խուճապի և անկարգությունների կանխման ուղղությամբ;
 - 8) զեկուցել ՏՀԿ պետին բոլոր միջադեպերի և դրանց կանխման համար ձեռնարկված միջոցառումների մասին:

Տեղեկատու սեղանի պետի պարտականությունները

1. Տեղեկատու (սեղանի) պետը նշանակվում է ՏՀԿ-ի պետի հրամանով, որի հիման վրա ստեղծվում է խումբ: Նա ենթարկվում է ՏՀԿ-ի պետին, նրա տեղակալին և հանդիսանում է տեղեկատու սեղանի անձնակազմի անմիջական պետը: Նա պարտավոր է իմանալ՝

2. Ամենօրյա գործունեության ժամանակ

- 1) իմանալ տեղեկատու սեղանի խնդիրները;
- 2) իմանալ իր պարտականությունները, տարահանման և տարաբաշխման կազմակերպման կարգը;
- 3) իմանալ ՏՀԿ-ի բոլոր կառուցվածքային մարմինների խնդիրները և կառուցվածքը;
- 4) իմանալ ՏՀԿ-ի ենթակառուցվածքային մարմինների տեղաբաշխման տեղը;
- 5) իմանալ տեղեկատու սեղանի անձնակազմի ազդարարման և հավաքի կարգը;
- 6) իմանալ անվտանգ գոտի մեկնելու համար ՏՀԿ-ին վերագրած տարահանվող օբյեկտների, բնակչության, ավտոշարասյունների (մեքենաների) զնաքների (վագոնների) քանակները:

3. Պատրաստականության բերման կարգադրություն ստանալիս

- 1) ՏՀԿ պետից ստանալ խնդրադրում;
- 2) ՏՀԿ շենքում տեղեկատու սեղանի աշխատանքները կազմակերպելու համար նախապատրաստել համապատասխան աշխատասենյակ;
- 3) ստուգել ՄՓՎ-ի և տարահանման հանձնաժողովի հետ ուղիղ հեռախոսակապերը;
- 4) ստանալ և անձնակազմին բաշխել անհատական պաշտպանության միջոցները
- 5) զեկուցել ՏՀԿ-ի պետին տեղեկատու սեղանի պատրաստականության մասին:

4. Բնակչության տարահանման կարգադրություն ստանալիս

- 1) ՏՀԿ պետից ստանալ խնդրադրում և տեղեկացնել տեղեկատու սեղանի անձնակազմին;
- 2) կազմակերպել աշխատանքները՝ ՏՀԿ-ի աշխատանքի ընթացքում;
- 3) իմանալ իրադրությունը ՏՀԿ-ում, ՏՀԿ-ի պետի, տեղակալի գտնվելու վայրը, պարետային ծառայության կազմակերպումը, տրանսպորտից օգտվելու վայրերը;
- 4) մշտական կապ հաստատել մարզի /համայնքի/ տարահանման հանձնաժողովի հետ;
- 5) ՏՀԿ պետին զեկուցել տարահանման մարմիններից ստացված կարգադրությունների, ազդանշանների և ցուցումների մասին;
- 6) ժամանակին զեկուցել տարահանման հանձնաժողովին ՏՀԿ-ի միջոցով կատարվող տարահանման և տարաբաշխման ընթացքի մասին, ինչպես նաև տարահանման պլան-ժամանակացույցի խախտումների մասին;
- 7) փոխադարձ կապ հաստատել ՏՀԿ-ի բոլոր խմբերի պետերի հետ;
- 8) հաշվառել ստացված և հաղորդված ազդանշանների, կարգադրությունների մատյանները:

Բժշկական կետի պետի պարտականությունները

1. ՏՀԿ-ի բուժկետի պետը և անձնակազմը նշանակվում է մարզի ՔՊ բժշկական ծառայության պետի հրամանով և ենթարկվում է ՏՀԿ պետին և նրա տեղակալին: Նա պարտավոր է իմանալ՝

2. Ամենօրյա գործունեության ժամանակ

- 1) ՏՀԿ-ում բուժ կետի խնդիրները;
- 2) բնակչության տարահանման և տարաբաշխման ընթացքը;
- 3) իր գործառնական պարտականությունները;
- 4) ՏՀԿ-ի տեղաբաշխման վայրը և բուժկետին հատկացված աշխատասենյակները;
- 5) տարահանման միջոցառումների բուժ ապահովման կարգը;
- 6) բուժ կետի բացազատման և աշխատանքների համար սարքավորումներ, գույք և սանիտարական մեքենա հատկացնող բուժ կազմակերպությունները;
- 7) տարահանվող բնակիչների շրջանում ի հայտ եկած վարակիչ հիվանդների մեկուսացման և հոսպիտալացման կարգը;

- 8) պարզել մոտակա բուժհաստատության գտնվելու վայրն ու ընդունարանի հեռախոսահամարները;
 - 9) պարբերաբար իրականացնել SՀԿ (ՀՀԿ)-ի համար նախատեսված տարածքի, շենքի, շրջակա տարածքի սանիտարական վիճակի հսկողություն,
 - 10) կազմակերպել հոսպիտալացման կարիք ունեցող հիվանդների բուժումը մոտակա բուժհաստատությունում,
 - 11) բուժ կետի աշխատակիցների ազդարարման և հավաքի կարգը:
3. Պատրաստականության բերման կարգադրություն ստանալիս
- 1) SՀԿ պետից ստանալ խնդրադրում;
